ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՋԻՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԱԶԳԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴԱՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ս/թ. մարտի 29—31 օրերին Մոսկվայում, «Ուկրաինա» հյուրանոցի դահլիճում, տեղի ունեցավ խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված կրոնական գործիչների առաջիկա համաշխարհային կոնֆերանսը նախապատրաստող կոմիտեի հերթական ընդլայնված նիստը:

Ժողովին մասնակցում էին քրիստոնեական, մահմեդական, բուդդայական, հրեական, սինդոյական և այլ կրոնների 116 ներկայացուցիչներ՝ ժամանած աշխարհի տարբեր երկրներից:

Նախապատրաստական սույն նիստին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, իր մասնակցությունը բերեց նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին հինգ հոգուց բաղկացած մի պատվիրակությամբ, որի կազմում էին՝

1. Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը.
2. Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Շահե արքեպ. Ածեմյանը.
3. Մայր Աթոռի դավանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը.
4. Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը.
5. Դամասկոսի թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Մարտի 28-ին, երկուշաբթի օրը, աղոթքով սկսվեց կոմիտեի սույն ժողովի առաջին նիստը: Կոմիտեի նախագահ, Տուլայի և Բելևայի միտրոպոլիտ տ. Յուվենալի արքեպիսկոպոսը ողջունեց աշխարհի 29 երկրներից ժամանած ժողովականներին:

Այնուհետև ողջույնի ջերմ խոսքով հանդես եկավ սույն ժողովի նախաձեռնող և կազմակերպիչ, Մոսկվայի և համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը:

Ապա ժողովն անցավ իր աշխատանքներին: Հաստատվեց օրակարգը, ընտրվեցին մանդատային, խմբագրական մարմիններ, միջազգային նախապատրաստական ավելի մեծ մի կոմիտեի թեկնածուներ առաջադրող մարմինը, աշխատանքային երկու հանձնախմբեր և քարտուղարություն:

Առաջին նիստին զեկուցումներով հանդես եկան՝ Միջին Ասիայի և Ղազախստանի մուֆտի Զ. Բաբախանովը, որի զեկուցման թեման էր՝ «Ժամանակակից ճգնաժամի օջախները և կրոնական գործիչների պարտականությունը՝ չեզոքացնելու դրանք», և տ. Յուվենալի միտրոպոլիտը, որի զեկուցման թեման էր՝ «Տարբեր կրոնների համագործակցության հիմքն ու փորձը խաղաղության հարցում»:

Այնուհետև ժողովականները հետագա օրերի ընթացքում աշխատանքային երկու առանձին խմբերում հանգամանորեն քննարկեցին օրակարգում դրված երկու գլխավոր զեկուցումներում առաջ քաշված հարցերը:

Ջեկուցողները գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել էին խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված համաշխարհային մի նոր համաժողովի նախապատրաստման և հրավիրման վրա:

Հայ եկեղեցու պատվիրակությունն իր գործուն մասնակցությունը բերեց այս երկու խմբերի աշխատանքներին: Աշխատանքային առաջին խմբում ելույթներով հանդես եկան տ. Շահե, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները և տ. Նարեկ եպիսկոպոսը, իսկ երկրորդ խմբում՝ տ. Արսեն եպիսկոպոսը և տ. Ոսկան ծ. վարդապետը:

Մարտի 31-ին տեղի ունեցավ ժողովի չորրորդ և վերջին լիագումար նիստը: Նիստում ժողովի քննարկմանը ներկայացվեցին աշխատանքային երկու խմբերի կողմից կատարված աշխատանքների արդյունքները: Լիագումար նիստը քննության առավ նաև առաջին նիստում կազմված հանձնաժողովների կատարած աշխատանքների արդյունքները, ինչպես նաև զբաղվեց կազմակերպչական այլ հարցերով:

Հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի սույն լիագումար նիստում ելույթ ունեցավ տ. Նարեկ եպս. Ճաքարյանը՝ հայտնելով, որ հայ եկեղեցին լիովին պաշտպանում է խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված համաշխարհային համաժողովի առաջիկա գումարումը Մոսկվայում: «Փաստ է,— նշեց իր ելույթում տ. Նարեկ եպիսկոպոսը,—որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրերից՝ 1949 թվականից, առաջնորդվելով մեր ժողովրդի, մեր եկեղեցու և մեր հայրենիքի գերագույն շահերից, իր գործուն մասնակցությունն է բերել այդ շարժմանը: Նույն ոգով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, Հայաստանյայց առաքելական եկեղեցին կմասնակցի վերոհիշյալ համաժողովին»:

Լիագումար նիստի վերջում միաձայնությամբ ընդունվեց պաշտոնական մի դիմում՝ ուղղված աշխարհի կրոնական բոլոր գործիչներին, իրենց մասնակցությունը բերելու 1977 թվականին Մոսկվայում տեղի ունենալիք միջկրոնական համաժողովի կազմակերպման և արդյունավետ անցկացման աշխատանքներին:

Այնուհետև ժողովն ընդունեց նախապատրաստական կոմիտեի աշխատանքների վերաբերյալ պաշտոնական մի հաղորդագրություն:

Վերջին լիագումար նիստում կազմվեց նաև 53 հոգուց բաղկացած միջազգային կոմիտե, որի վրա դրվեց համաժողովը կազմակերպելու և անցկացնելու պատասխանատու պարտականությունը: Հանուն հայ եկեղեցու այդ կոմիտեի անդամ ընտրվեց տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը:

Մարտի 31-ի երեկոյան Մոսկվայի և համայն Ռուսիո Ն. Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոցում կազմակերպեց պաշտոնական ընդունելություն ժողովի մասնակիցների պատվին: Սույն ճաշկերույթին ներկա էին նաև պաշտոնական այլ հրավիրյալներ և հյուրեր՝ շուրջ 300 հոգի:

Ապրիլի 1-ին բոլոր պատգամավորներն այցելեցին Զագորսկի մայրավանք և հոգևոր ակադեմիա, ապա ներկա եղան հոգևոր ակադեմիայի ուսանողության կողմից կազմակերպված հոգևոր համերգին: